ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.01.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/200

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.12.2019թ. թիվ 26/26-1/21092-2019 գրությամբ «Կարենսիլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երքաղլույս» ՓԲԸ-ի 13.12.2019թ. թիվ 68/1471 գրության հիման վրա, 18.12.2019թ. թիվ 26/26-1/21092-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Կարենսիլ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Կարենօիլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «Կարենօիլ» ՍՊԸ-ի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

«Կարենօիլ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/200 ընթացակարգի շրջանակներում 14.01.2020թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. «Երքաղլույս» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Երքաղլույս» ՓԲԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 13.12.2019թ. թիվ 68/1471 գրությամբ հայտնել է, որ 10.12.2019թ. պայմանագրով ստանձնած պարտավորությունները 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով չկատարելու հիմքով «Երքաղլույս» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) միակողմանիորեն հրաժարվել է Պատվիրատուի և «Կարենօիլ»ՍՊԸ-ի միջև 26.03.2019թ. կնքված ապրանքների մատակարարման «ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-19/4-1» պայմանագրից՝ համարելով այն լուծված:

Պատվիրատուն պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/200 ընթացակարգի շրջանակներում 14.01.2020թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2019/200 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2019/200 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երքաղլույս» ՓԲԸ-ի և «Կարենօիլ» ՍՊԸ-ի միջև 26.03.2019թ. կնքվել է «ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-19/4-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը (հետայսու՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. «Կարենօիլ» ՍՊԸ-ին ուղղված 10.12.2019թ. թիվ 68/1444 գրությամբ «Երքաղլույս» ՓԲԸ-ն հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 կետի «ա» և «բ» ենթակետերը, միակողմանի լուծում է Պայմանագիրը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.12.2019թ. թիվ 26/26-1/21092-2019 գրությունը, «Երքաղլույս» ՓԲԸ-ի 13.12.2019թ. թիվ 68/1471 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Երքաղլույս» ՓԲԸ-ի և «Կարենօիլ» ՍՊԸ-ի միջև 26.03.2019թ. կնքվել է «ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-19/4-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի N 1 հավելված՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով պարտավորվել է Պատվիրատուին մատակարարել համապատասխանաբար 416 լ «շարժիչի յուղ ձմեռային «10W 40» և 416 լ «հիդրավլիկ յուղ» ապրանքատեսակները:

Նույն հավելվածի համաձայն՝ մատակարարման ենթակա քանակը և ժամկետը սահմանվել է Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2019թ. դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածը, կամ Պայմանագրի 8.1 կետի համաձայն, յուրաքանչյուր անգամ գնորդից ապրանքի մատակարարման հայտի հիման վրա, գնորդի կողմից պատվիրված քանակի չափով: Հաջորդական փուլերի համար մատակարարման ժամկետը սահմանվել է հայտը տալու օրվանից հաշված ոչ ուշ քան 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Ապրանքի մատակարարման համար պատվերը գնորդի կողմից վաճառողին տրվում է գրավոր կամ բանավոր ձևով՝ հայտը Պայմանագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու եղանակով:

Ընկերության տնօրենին ուղղված 21.11.2019թ. էլեկտրոնային հայտով Պատվիրատուն հայտնել է, որ համաձայն Պայմանագրի՝ 2019 թվականի հոկտեմբեր ամսին «Երքաղլույս» ՓԲԸ-ի ավտոշարասյան պետ Գ. Մկրտչյանը հեռախոսազանգի միջոցով պատվիրել է 2-րդ չափաբաժնով նախատեսված 200 լիտր շարժիչի յուղ ձմեռային «10W 40» և 5-րդ չափաբաժնով նախատեսված 200 լիտր հիդրավլիկ յուղ: Մատակարարումն Ընկերության կողմից չի իրականացվել մինչ օրս: Պատվիրատուի վերոհիշյալ աշխատակիցը, տեսնելով որ մատակարարումը չի իրականացվում ևս երեք անգամ հեռախոսազանգի միջոցով Ընկերության տնօրենի բջջային համարին երեք-չորս օր պարբերականությամբ հիշեցրել է մատակարարման անհրաժեշտության մասին:

Նույն նամակով Պատվիրատուն հայտնել է, որ Ընկերության կողմից պայմանագրային պարտավորությունները չկատարելու պատճառով մասամբ խափանվել է Պատվիրատուի ավտոշարասյան գործունեությունը:

Նույն գրությամբ «Երքաղլույս» ՓԲԸ-ն հորդորել է Ընկերությանը և հիշեցրել, որ անհրաժեշտ է մատակարարել նշված քանակներով վերոհիշյալ ապրանքատեսակների մատակարարումը, հակառակ դեպքում Պատվիրատուն ստիպված կլինի կիրառել Պայմանագրով նախատեսված պատժամիջոցները:

Ընկերությանն ուղղված 29.11.2019թ. թիվ 68/1380 գրությամբ «Երքաղլույս» ՓԲԸ-ն հայտնել է, որ Պատվիրատուի կողմից Ընկերությանն էլեկտրոնային եղանակով 21.11.2019թ. ներկայացվել է 200 լիտր «շարժիչի յուղ ձմեռային «10W 40»» 200 լիտր «հիդրավլիկ յուղ» ապրանքատեսակների մատակարարման հայտ, որն Ընկերության կողմից համաձայն Պայմանագրի, պետք է մատակարարվեր 5 աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում՝ նշված ապրանքները մատակարարելու հայտը մինչ վերոհիշյալ ամսաթիվը ներկայացվել է նաև բանավոր՝ հիմք ընդունելով Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված հայտը բանավոր ձևով ներկայացնելու պայմանը:

Առ սույն գրության Ընկերության կողմից դեռևս չեն մատակարարվել հիշյալ ապրանքատեսակները, ըստ այդմ Ընկերության նկատմամբ կիրառվելու է Պայմանագրի 6.2 կետով նախատեսված՝ ապրանքի մատակարարման ժամկետի խախտման դեպքում յուրաքանչյուր ուշացած օրվա համար գանձվող տույժը:

Պատվիրատուն նույն գրությամբ հայտնել է, որ կարևորելով գործընկերների գործարար համբավը և ողջամիտ շրջանառության համակեցությունը, կրկին հորդորում է գրության ստացման պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում մատակարարել վերը նշված ապրանքատեսակը և չխախտել Պայմանագրի էական պայմանները, ըստ որի Պատվիրատուն կարող է միակողմանի հրաժարվել Պայմանագրից և մատակարարի նկատմամբ կիրառել համապատասխան միջոցներ:

«Կարենօիլ» ՍՊԸ-ին ուղղված 10.12.2019թ. թիվ 68/1444 գրությամբ «Երքաղլույս» ՓԲԸ-ն հայտնել է, որ Ընկերության կողմից վերոհիշյալ ապրանքատեսակները չմատակարարելու հետևանքով Ընկերությունը խախտել է Պայմանագրի էական պայմանները, ուստի Պատվիրատուն հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասը, 466-րդ հոդվածի 3-րդ մասը, Պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 կետի «ա» և «բ» ենթակետերը, միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Նույն կետի 2.1.7.1. ենթակետի համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել գնորդի համար ընդունելի ժամկետում.

<u>բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 7 օրից ավելի:</u>

Այսպիսով՝ «Կարենօիլ» ՍՊԸ-ն ստանձնել է իր և «Երքաղլույս» ՓԲԸ-ի միջև 26.03.2019թ. կնքված թիվ «ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-19/4-1» պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում Պատվիրատուին համապատասխան քանակի ապրանքներ մատակարարելու պարտականությունը: Ուսումնասիրելով գործում առկա նյութերը՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, քանի որ Ընկերության կողմից մատակարարման հայտը ստանալուց հետո սահմանված ժամկետներում Պատվիրատուին չի մատակարարել Պայմանագրով նախատեսված ապրանքատեսակ-ները և մատակարարման ժամկետները խախտվել են 7 օրից ավելի, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը:

Գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.12.2019թ. թիվ 26/26-1/21092-2019 գրությամբ «Կարենօիլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով

նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Կարենսիլ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**